ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 29

ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Մրգավան համայնքի ավագանու 08 նիստի հետևյալ օրակարգը.

1. Մրգավան համայնքի 2015 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
2. Մրգավան համայնքում 2016 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափի որոշման, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների,<<Մրգավանի մանկապարտեզ>>ՀՈԱԿ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը,պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ
5. ՎԼԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 30

ՀԱՄԱՅՆՔԻ 2015ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

Համայնքի 2015թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.Ֆոնդային բյուջեի եկամտային մասում ավելացնել հողի օտարումից եկամուտներ 2235000/երկու միլիոն երկու հարյուր երեսունհինգ հազար/ դրամ:

2.Ֆոնդային բյուջեի ծախսային մասում այդ գումարից

2.1Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/01.03.03.55/ ծրագրի 5411/հող/ հոդվածին հատկացնել 2.000.000/երկու միլիոն/ դրամ:

2.2 Ֆոնդայի բյուջեի պահուստային ֆոնդ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածին հատկացնել 235.000/երկու հարյուր երեսունհինգ հազար/ դրամ:

3.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ/ 11.01.02.51/ ծրագրի 4891/պահուստային միջոցներ/ հոդվածից 1.805.000/մեկ միլիոն ութ հարյուր հինգ հազար/ դրամ հատկացնել

3.1 Կառավարման մարմնի պահպանում /01.01.01.51/ ծրագրին հատկացնել 1.330.000/մեկ միլիոն երեք հարյուր երեսուն հազար/ դրամ, որից՝

4111/աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ/ հոդվածին՝ 6.0/ վեց հազար/ դրամ

4112/պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ/ հոդվածին՝1.225.000/մեկ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար/ դրամ:

4232/համակարգչային ծառայություններ/ հոդվածին՝12.000/տասներկու հազար/ դրամ

4234/տեղեկատվական ծառայություններ/ հոդվածին՝37.000/երեսունյոթ հազար/ դրամ

4261/գրասենյակային նյութեր և հագուստ/ հոդվածին՝50.000/հիսուն հազար /դրամ

3.2 Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում/06.04.01.52/ ծրագրին հատկացնել 362.000/երեք հարյուր վաթսուներկու/ դրամ, որից՝

4212/էներգետիկ ծառայություններ/ հոդվածին՝ 350.0000/երեք հարյուր հիսուն հազար/ դրամ:

4251/ընթացիկ նորոգում/ հոդվածին՝12.000/տասներկու հազար/ դրամ:

3.3 Գրադարանային ծառայություններ/08.02.01.51/ ծրագրի 4112/պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ/ հոդվածին հատկացնել 73.000/ յոթանասուներեք հազար/ դրամ:

3.4 Թատերական ներկայացումներ/08.02.05.52/ ծրագրի 4239/ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածին հատկացնել 40.0/ քառասուն հազար/ դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ
5. ՎԼԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 31

ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև՝ մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 /տասնհինգ հազար/ դրամ:

2) Սույն կետի <<1)>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 /երեսուն հազար/ դրամ

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ

գ. 1001քմ-ից ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70.000 /յոթանասուն հազար/ դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) Մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 /երեք հազար/ դրամ

4) 20քմ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական

և այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 /երեք հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ:

2) Ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ՝ 1քմ համար:

2) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 /հարյուր հիսուն հազար/ դրամ:

3) Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տարեկան տուրքը սահմանվում է 30.000 /երեսուն հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) Առևտրի օբյեկտների համար՝ 25.000 /քսանհինգ հազար/ դրամ

2) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ

3) Բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ

4) Խաղատների կազմակերպման համար՝ 500.000 /հինգ հարյուր հազար/ դրամ

5) Շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ

6) Վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 /հարյուր հազար/ դրամ

7.Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել

1) հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 6000 դրամ.
2) ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար 1 քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /մեկ հազար/ դրամ:

2) Թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3) Այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

4) Դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 /յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանվում է 500 /հինգ հարյուր/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ՝ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

11. ՏԻՄ տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու, վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ՏԻՄ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

12. ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

13. ՏԻՄ կողմից աղբահանություն իրականացնելու համար նախատեսվում է տեղական վճար՝ յուրաքանչյուր բնակչի համար տարեկան 250 /երկու հարյուր հիսուն/ դրամ:

Սույն որոշման առաջին, երկրորդ և երրորդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ
5. ՎԼԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մրգավան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մրգավան, (0235)22529, mrgavan.ararat@mta.gov.am , mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թվականի N 32

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, <<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի պահանջներով՝ Մրգավան համայնքի ավագանին

Որոշում է

Հաստատել Մրգավան համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների, <<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ աշխատակիցների հետևյալ թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1. Համայնքի ղեկավար՝ 247.405 /երկու հարյուր քառասունյոթ հազար չորս հարյուր հինգ/ դրամ

ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ

2. Համայնքի ղեկավարի տեղակալ՝ 1 - 119.027/մեկ հարյուր տասնինը հազար քսանյոթ/ դրամ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ

3. Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/՝ 1 - 146.054/մեկ հարյուր քառասունվեց հազար հիսունչորս/ դրամ

4. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1,3.1-2/՝ 2- 127.652/մեկ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր հիսուներկու/ դրամ

5. Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/՝ 1 -

126.203/մեկ հարյուր քսանվեց հազար երկու հարյուր երեք/ դրամ

6. Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/՝ 1 - 77,904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿՆ ԱՇԽԱՏԱՆՔ

8. Հարկահավաք՝ 1 - 119.027/մեկ հարյուր տասնինը հազար քսանյոթ/ դրամ

9. Գրադարանավար՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

10. Պահակ՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

11. Վարորդ՝ 1 - 79.366 /յոթանասունինը հազար երեք հարյուր վաթսունվեց/ դրամ

12. Հավաքարար՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

<<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Մանկապարտեզի տնօրեն՝ 120.000 /մեկ հարյուր քսան հազար/ դրամ

2. Հաշվապահ՝ 0,5 - 72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

3. Դաստիարակ՝ 0,625 - 77,904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

4. Դաստիարակ՝ 0,625 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

5. Դաստիարակ՝ 0,625 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

6. Դաստիարակ՝ 0,625 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

7. Երաժշտության դաստիարակ, պարուսույց՝1 - 72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

8. Դաստիարակի օգնական՝ 1 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

9. Դաստիարակի օգնական՝ 1 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

10. Բուժքույր՝ 0,5 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

11. Խոհարար՝ 1 - 72,751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

12. Հավաքարար՝ 1 - 77.904/յոթանասունյոթ հազար ինը հարյուր չորս/ դրամ

13. Պահակ՝ 1 - 72.751/յոթանասուներկու հազար յոթ հարյուր հիսունմեկ/ դրամ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՅԻԿ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԿՈՍՏԱՆ
3. ԹԵՎՈՍՅԱՆ ՄԱՐՏԻՆ
4. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ՄԱՅԻՍ
5. ՎԼԱՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ